ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՀՈՎՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

РА ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ОВКСКАЯ СРЕДНЯЯ ШКОЛА
НЕКОММЕРЧЕСКАЯ
ГОСУДАРСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ

Էլ.փոստ hovqi@mail.ru

№ 109

,, 12 10 2022թ.

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Հովքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի(17 դասաժամ), գինեղեկի(1 դրույք) , քիմիայի(6 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների խումբ 4 դասաժամ, տղաների խումբ 4 դասաժամ),կերպարվեստի (2 դասաժամ),երգի (2 դասաժամ), ինֆորմատիկայի և թվային գրագիտության և համակարգչային գիտության(7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 12-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ.** հոկտեմբերի 27-ին՝ ժամը 14: 00-ին,ՀՀ Տավուշի մարզի Հովքի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Տավուշի մարզ, գ. Հովք, փողոց 3, շենք 43: : Տեղեկությունների համար զանգահարել 077-15-13-43 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն՝ Ա.Ասիրյան